«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Խոսք և հաղորդակցություն>> ժամերը մայրենիի դասին

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Ռ. Դանիելյան

Ուսումնական հաստատություն՝ Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Մտերմիկ Խոսքը լեզվի իրական վիճակն է, իսկական գոյը:

Ղ. Աղայան

Գիտենք՝ տարրական կրթության դերը հանրակրթության համակարգում անգնահատելի է, քանի որ այս օղակում է դրվում ողջ կրթական համակարգի հիմքը: Ուսուցման այս օղակը ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք տարբերակում են մտցնում տարրական կրթության և հանրակրթության հետագա մյուս փուլերի միջև: Այս փուլում է տեղի ունենում ուսումնական հմտությունների, այսինքն՝ որոշակի ուսումնական գործողությունների, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը: Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյաէթիկական նորմաների մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:

Այս առանձնահատկությունների հաշվառմամբ էլ <<Հանրակրթության պետական չափորոշիչը>> սահմանում է տարրական կրթության հիմնական նպատակները.

Տարրական դպրոցի սովորողի՝

- Մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը
- Լեզվամտածողության,գրագիտության,տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը,
- Աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,
- Բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը
- Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակությունը
- Միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթական մակարդակի ապահովումը:

Հանրակրթական պետական չափորոշիչը այս նպատակներին համապատասխան սահմանում է նաև այն հիմնական կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևավորել տարրական դպրոցում:

Ակնկալվում է, որ հետևողական և նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա՝

- Հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը
- Կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել պարզ տեքստեր
- Տրամաբանական եզրակացություններ անել պատճառահետևանքային կապերի վերաբերյալ
- Սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին
- Ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել
- Կարողանալ աշխատել համագործակցված
- Իմանալ իր իրավունքներն ու պարտականությունները
- Ցուցաբերել հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զուսպ վարք
- Ունենալ համարժեք ինքնագնահատական:

<<Խոսք և հաղորդակցություն>> ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների /գրել, կարդալ, խոսել, լսել/ ուղղությամբ կազմակերպված, համակարգված և նպատակամետ աշխատանքն է:

Այս դասաժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

<<Հանրակրթական դպրոցի առարկաների ուսումնական չափորոշիչներում և ծրագրերում պետք է հստակորեն հաշվի առնվեն դասավանդման լեզվի առանձնահատկությունները, հստակ ուշադրություն դարձվի տվյալ

մասնագիտությանը բնորոշ բառաշերտին, լեզվի գործառնական ոճերին /օր.՝ մաթեմատիկայի լեզու, արվեստի լեզու և այլն/:

<<Խոսք և հաղորդակցություն>> առաջադրանքները ներկայացված են հետևյալ տեսքով՝

1. Հաղորդակցություն
2. Հաղորդակցության տեսակները
3. Բարեկիրթ հաղորդակցություն
4. Խոսքային ժանրեր

Շփում և հաղորդակցություն

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցությունն է, որի արդյունքում՝ ա/շփվողները որոշակի տեղեկատվություն են փոխանակում՝ այդպիսով ճանաչելով շրջապատող աշխարհը, մարդկանց, այդ թվում նաև ինքն իրեն (տեղեկատվական հաղորդակցական գործառույթ):
բ/պլանավորում և կազմակերպում են գործունեությունը՝ կարգավորելով սեփական և գործընկերոջ վարքը (հաղորդակցական –կարգավորող գործառույթ):
գ/ազդում, ներգործում են շփվողների հուզական-զգայական ոլորտի վրա՝ կիրառելով աֆեկտիվ-հաղորդակցական գործառույթը:
Հաղորդակցական խնդիրը այն նպատակն է, որը դու մարդկանց հետ շփվելիս դնում ես քո առաջ և ձգտում ես հասնել դրան:
Հաղորդակցական նպատակի ձևակերպման կարողությունը զարգացնելու համարկարելի է ներկայացնել այս առաջադրանքը:
Մարդիկ զրուցում, հաղորդակցվում են միմյանց հետ՝ միանգամայն որոշակի նպատակով ինչ-որ բան հարցնել, իմանալ, ճշտել, ողջունել, շնորհավորել, բացատրել, օգնել, տպավորությունները, ուրախությունըկիսել, պարծենալ, գլուխգովել, պարզապեսինչ-որ բան հաղորդել, մխիթարել…

Հաղորդակցության տեսակները

Ըստ <<Խոսք և հաղորդակցություն>> դասաժամերին անդրադառնում ենք նաև հաղորդակցության տեսակներին:
Պայմանավորված հաղորդակցության նպատակով, տեղով և ժամանակով և հասցեատիրոջով, շփման ձևերն ու միջոցները մենք ենք ընտրում, ըստ դրա էլ առանձնացնում հաղորդակցման տեսակները՝

- Խոսքային և ոչ խոսքային
- Բանավոր կամ գրավոր,
- Միջանձնային կամ զանգվածային,
- Մտերմիկ կամ գործնական, պաշտոնական:

Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն

Այս նպատակով կարելի է ներկայացնել 1-2 դասարանների <<ինչպե՞ս ճանաչել տրամադրությունը>>:

Երեխաներին առաջարկենք, թե ինչպես են հասկանում իրենց շրջապատող մարդկանց /հայրիկի, ուսուցչի, տատիկի/ տրամադրությունը:

Օր՝ -Ինչպե՞ս և ինչի՞ց ես հասկանում, որ /մայրիկը, եղբայրը, ուսուցիչը և այլն/ բարկացած է /ուրախ է, տխուր և այլն/:

-Երբ մայրիկը ափսեները լվանալիս բարձր չխչխկացնում է, ուրեմն բարկացնել:

Օր՝ -Երբ քոյրիկս սենյակում փակվում է, ուրեմն տխուր է:

Կամ կարելի է տալ այսպիսի հարց.

-Իսկ դու կարողանու՞մ ես կարդալ մարդկանց դեմքի արտահայտությունները.

Երեխան նկարում է այդ տրամադրությունները և յուրաքանչյուրի տակ նշում.

Ուրախ

Տխուր

Զարմացած

Խոսքային հաղորդակցության մյուս տեսակը բանավոր և գրավոր հաղորդակցությունն է:

Այս թեմաները կարելի է կիրառել երկրորդ դասարանից սկսած:

Օր.՝ երեխաներին կարելի է առաջարկել մի իրավիճակ, երբ մեծերը տանը չեն, իսկ ինքը պետք է տանից դուրս գա: Ինչպե՞ս կարող է տեղյակ պահել նրանց.

- Զանգահարել և հայտնել <u>հեռախոսով</u> /բանավոր/
- Հաղորդագրություն թողնել հեռախոսի ինքնապատասխանիչին /բանավոր/
  Գրություն թողնել /գրավոր/

Հաղորդագրություն ուղարկել մայրիկի բջջային հեռախոսին /գրավոր/

Որպես օրինակ ներկայացնենք դասի հետևյալ պլանը.

Առարկան՝ մայրենի (խ.հ.)

Դասարանը՝ 3-րդ

Թեման՝ Զգացմունքներ

Դասաժամը՝ 1

Դասի տիպը՝ համակցված

Չափորոշչային պահանջը՝ զգացողությունների բնութագրում, տարբերակում

Դասի նպատակը՝ զգացմունքների ճանաչում խոսքային և ոչ խոսքային ձևերով

Խնդիրները՝ աշակերտները

- կներկայացնեն իրենց հոգեվիճակը (տրամադրությունը) բառերով
- կկարողանան համապատասխանեցնել բառերը նկարներին
- կմասնակցեն համագործակցային աշխատանքի
- կգտնեն կապեր նկարների և սեփական տրամադրության միջև
- կստեղծեն <<Տրամադրության գորգ>>, <<Տրամադրությունաչափ>>

Դասին անհրաժեշտ նյութերը՝ տարբեր զգացողություններ արտահայտող նկարներ, սոսնձաթուղթ, բառաքարտեր, նշագրիչներ:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ՝

Հարցադրում, հրահանգ՝ Ի՞նչ տրամադրություն ունեք:

Գրեք սոսնձաթղթին բառերով կամ պատկերի խորհրդանշանով և փակցրեք <<Տրամադրության գորգ>> պաստառին (5ր.): Իմաստի ընկալման փուլ՝

ք.1 Հարցադրումներ՝

- Ի՞նչն է ձեզ ուրախացնում:
- Ի՞նչ եք անում, երբ ուրախ եք:
- Ի՞նչն է ձեզ տխրեցնում:
- Ի՞նչ եք անում, երբ տխուր եք:
- Ինչպե՞ս կարելի է կռահել մարդու տրամադրությունը:
- Ի՞նչ կարելի է անել տրամադրությունը փոխելու համար:

(Մեծ խմբով քննարկում)

քայլ. 2 Խմբաբաժանում

քայլ. 3 Աշխատանք խմբերում՝

Աշակերտներին տրվում են տրամադրություն արտահայտող նկարներ, ծրարներով բառաքարտեր: Հանձնարարվում է բառաքարտերից ընտրել նկարներին համապատասխան բառերը:

քայլ. 4 Մեկնաբանել ընտրված բառերի կապը նկարների հետ:

քայլ.5 Ստեղծել տրամադրություն չափ (բացատրի, որ ձախից աջ պիտի լինի տրամադրության աճ):

Գրատախտակին կամ մեծ պաստառին խմբերը հերթով դասավորում են նկարները (վատ զգացողություն արտահայտող նկարից դեպի լավ):

քայլ. 6 Յուրաքանչյուր խումբ իր առանձնացրած բառերից ընտրում է ամենաբնորոշը և տեղադրում համապատասխան նկարի տակ (25ր.):

Կշռադատման փուլ

Անդրադարձ խթանման փուլին

(տրամադրության գորգում գրառված սեփական բառը համապատասխանեցնել տրամադրությունաչափին):

Ամփոփում, գնահատում

Ըստ տրամադրությունաչափի կգնահատվի ինչպիսի՞ն է դասարանի տրամադրությունը (10ր.):

Շփման ընթացքում մարդիկ ամենատարբեր նպատակներ կարող են ունենալ՝

- Խնդրել
- Շնորհավորել
- Հանգստացնել
- Խրախուսել
- Շնորհակալություն հայտնել
- Արդարանալ
- Համոզել և այլն:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է տարբեր հաղորդակցական իրավիճակներ՝ հանձնարարելով հանպատրաստից խոսք կառուցել՝ իրավիճակին համապատասխան բառեր գտնելով:

Նրանք 1-2 րոպե պատրաստվելուց հետո իրենց խոսքը ներկայացնում են ընկերներին, որոնք էլ գնահատում են խոսքը, թե որքանով է իրավիճակին համապատասխան: Այսինքն, թե խոսքը արդյո՞ք հասավ իր հաղորդակցական նպատակին /համոզեց, մխիթարեց, գովեց և այլն/:

Օր.՝ Երեխային ասում են, որ այսօր ընկերոջդ /ընկերուհուդ/ ծննդյան օրն է:

Շնորհավորի՛ր նրան:

Գտի՛ր իրավիճակին համապատասխան բառեր:

-Ընկերդ կամ ընկերուհիդ <<երկուս>> է ստացել կամ պարտվել է սպորտային մրցույթում:

Մխիթարի՛ր նրան:

Հաղորդակցության գործընթացը կազմակերպվում է մասնակիցների միջոցով՝ յուրաքանչյուրին տալով համապատասխան դերեր /ունկնդրող, հասցեագորդ, հաղորդող/:

Ո՞վ, ո՞ւմ, ե՞րբ

Ներկայացնում եմ առածների կամ ասացվածքներ՝ առաջարկելով երեխաներին պատկերացնել, թե ով, ում և երբ, ինչ իրավիճակում կարող է ասել այս խոսքերը:

Օր.՝ Հասկացողին մին ասա,

Չհասկացողին՝ հազար ու մին:

Ո՞վ /հաղորդող/ մայրիկը, հայրիկը, ուսուցիչը…

Ո՞ւմ /ստացող/ երեխային, աշակերտին…

Ե՞րբ առաջադրանքը չկատարելու, խորհուրդը չլսելու դեպքում:

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից խիստ կարևոր է ունկնդրելու կարողությունը: Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել ակտիվ լսել, այսինքն՝ արձագանքել զրուցակցի խոսքերին, իր խոսքը կառուցել նրա ասածի հիման վրա, այլապես երկխոսությունը կարող է վերածվել երկու մենախոսության:

Ունկնդրումըենթադրում է մի շարք հիմնական կարողություններ՝

- ընկալել և հասկանալ տեքստի հիմնական բովանդակությունը
- դուրս բերել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը
- հասկանալ և ամբողջական ըմբռնել բովանդակության մանրամասները:

Օր.՝ 1-2 դասարաններում ուսուցիչը պատմությունից, հեքիաթներից հատվածներ է ընտրում և ներկայացնում, որտեղ երկխոսության, զրույցի, ունկնդրելու իրավիճակներ կան, իսկ երեխաները որոշում են.

-ո՞վ է խոսում,

-ո՞վ է լսում

Որպես օրինակ կարելի է ներկայացնել անավարտ նախադասությունների հաղորդակցության տեսակների և հաղորդակցվող կողմերի մասին՝ երեխաներին տալով ավարտուն միտքը:

Օր.՝ Ասողին…….. է պետք:

Իմ գրած նամակը……. է:

Շատ կարևոր է բացահայտել ունկնդրման նպատակը:

Ուսուցիչը պատմությունից, հեքիաթներից հատվածներ է ընտրում և ներկայացնում, որտեղերկխոսության, զրույցի, ունկնդրելու իրավիճակներ կան, իսկ երեխաները որոշում են.

-ո՞վ է խոսում

-ո՞վ է լսում

-ինչպե՞ս է լսում/ուշադիր, անուշադիր/

-ինչո՞ւ, ի՞նչ նպատակով է լսում /նոր, հետաքրքիր բան իմանալու դիմացինին օգնելու, տեղեկատվություն ստանալու, որոշում կայացնելու և այլն/:

Օրինակ՝ Հանձնարարվում է կարդալ Հ. Թումանյանի <<Գրիչ>> բանաստեղծությունը՝ առաջարկելով ուշադրություն դարձնել, թե ինչո՞ւ, ինչպե՞ս, ի՞նչ նպատակով է գրիչը լսում երեխային:

Հնարավոր պատասխանները՝

- տեղեկատվություն ստանալու
- վերաբերմունք արտահայտելու,
- օգնելու
- խնդրանք կատարելու

Շատ կարևոր է սովորեցնել հասկանալ ունկնդրած տեքստը:

Այսինքն պետք է հասկանալ ո՞ւմ կամ ինչի՞ մասին է խոսքը,ի՞նչենկոնկրետասում, անում, ո՞րնէամենակարևորը:

Օրինակ՝ -Ներկայացնեմ Ա. Խնկոյանի <<Բզեզ>> բանաստեղծությունը: /1-2 դ./



Օրինակ՝ այս կաղապարով կարելի է վերլուծել Ա. Խնկոյանի «Բզեզ» բանաստեղծությունը:

Բզի՛զ, բզի՛զ, բզբզան,
Բզեզն եկավ տզտզան,
Եկավ-ընկավ թակարդը,
Նրան բռնեց չար սարդը:



Կարևոր է նաև սովորեցնել ունկնդրելիս հարցեր տալ:

Այդ դեպքում երեխաներին օգնելու նպատակով կարելի է կատարել այսպիսի մի աշխատանք /որևէ կենդանու մասին/. Օրինակ՝

- արտաքին տեսքը
- չափերը /քաշը, հասակը/
- սննդին-/ի՞նչ և ինչպես է ուտում/
- միջավայրին /որտեղ է ապրում/
- ձագերին /ինչպե՞ս է բազմանում, ինչպե՞ս են մեծանում/
- սովորույթներին, կենսակերպին
- թշնամիներին
- բնության մեջ նրա կատարած դերին

Կարևորագույն կետերից մեկն էլ սովորեցնելիս ուշադրություն դարձնելտեղեկատվությանը, որը ստանում ենք ոչ խոսքային միջոցներով.

Դրա համար անհրաժեշտ է՝

- ճիշտ փոխըմբռնումը,
- բովանդակության ընկալման ճշգրտությունը,
- հաղորդակցման խթանումը, խրախուսումը

Օրինակ՝

Ինչպե՞ս եք իմանում երեխաներ, երբ մեզ լսում են ուշադիր:

- Նայում են մեզ, երբ խոսում ենք:
- Գլխով են անում:
- Ժպտում են:

Հաջորդ կարևորագույն կետերից մեկն էլ ստուգել բանավոր խոսքն ունկնդրելու, ընկալելու և մտապահելու կարողությունները:

Նախ պետք է տեքստը ընտրել ոչ շատ ծավալուն, այն պետք է լինի երեխայի համար հետաքրքիր տեքստը ունկնդրելուց հետո երեխաները կարողանան կատարել եզրահանգումներ:

Այդ աշխատանքը կարելի է կատարել հետևյալ հաջորդականությամբ:

1. Վերնագրել
2. Դարձնել երկխոսություն
3. Հարցեր մտածել
4. Շարունակել կամ ավարտել
5. Նկարագրել կամ դերերով խաղարկել
6. Մեկ նախադասությամբ ամփոփել
7. Ընտրել առած կամ ասացվածք, որը կարող է բնութագրել իրավիճակը կամ պատմության հիմնական իմաստը
8. Արտահայտել վերաբերմունքը կամ կարծիքը պատմության այս կամ այն դրվագի, հերոսի, նրա արարքների և այլնի նկատմամբ:
9. Նկարագրել՝ պատմության այս կամ այն հերոսին /հիմնվելով նրա խոսքի, ոչ խոսքային միջոցների, արարքների, կարծիների վրա/:
10. Ինչպիսի ունկնդիրեմ ես երեխաների ունկնդրման կարողությունների ինքնագնահատման համար կարելի է առաջարկել թեստ:

Հաղորդակցման մյուս տեսակը բարեկիրթ հաղորդակցությունն է:

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդիր լուծում է ենթադրվում.

- տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը

- իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ
- կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան:

Ողջույն, բարև /ո՞ւմ/

Այն կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով `

Ի՞նչ ես ասում ողջունելիս	Ո՞ւմ ես ողջունում
Բարև	Բոլորին
Բարև Ձեզ	Մեծերին, ուսուցիչներին և այլն
Ողջույն	Ընկերոջը, քրոջը
Բարի լույս	բոլորին
Բարի օր	բոլորին
Բարի երեկո	բոլորին

Բարեկիրթ –ոչ բարեկիրթ

Ուսուցիչը գրական տեքստերից ընտրում է հատվածներ, որտեղ հնարավոր է՝ համեմատել, հակադրել, քննարկել բարեկիրթ և ոչ բարեկիրթ վարքի դրսևորումները:

Օրինակ՝ <<Շունն ու կատուն>> ստեղծագործության մեջ շան ու կատվի երկխոսությունները պատմության տարբեր հատվածներում:

-Բարի աջողում, ուստա Փիսո,

Գլուխս մրսեց, ի սեր աստծո,

Առ էս մորթին ու ինձ համար

Մի գդակ կարիր գլխիս համար:

Համեմատել

Ուստեն եկավ քուրքը հագին,

Շանը տեսավ, բեղի տակին…

Բարեկիրթ աշակերտը, այն մարդն է, որը չի կոպտում, չի նեղացնում ոչ մեկին, խոսում է հանգիստ և մեղմ ձայնով:

Ուսուցչի պարագայում բարեկրթությունը դիմացինին լսել կարողանալն է, չընդհատելը, խոսքի մեջ չընկնելը:

Խնդրե՞լ, թե՞ պահանջել

Բարեկիրթ խոսքի և վարքի ցուցիչներից մեկը խնդրանքի բարեկիրթ արտահայտման կարողությունն է:

Օրինակ՝ Ինչի՞ մասին ես խնդրում տանը /ծնողներիդ, հարազատներիդ/ Դպրոցում /ուսուցչիդ, տնօրենին/ և այլն:

Կարելի է գրական տեքստերից ընտրել որոշակի հատվածներ, որտեղ կան բարեկիրթ խնդրանքի և պահանջի, նույնիսկ սպառնալիքի դրվագներ:

Օրինակ՝ Հ. Թումանյանի <<Չարի վերջը>> ստեղծագործությունից մի փոքր դրվագի ներկարարում.

-Կու՜ կու՜ , կու՜ կու՜ իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թռչե՜ք, գնա՜ք
Ուրախանա՜ք…

Բարեկիրթ խոսքի առանձնահատկություններից է նաև քաղաքավարական տարբեր գրություններ գրելու կարողությունը: Այդպիսի գրավոր տեսակի ներկայացնելու մի ձև է հրավիրատոմսը:

Հրավիրատոմսում անպայման անհրաժեշտ է նշել այդ մարդու անունը : Հետո նշել, թե ինչ միջոցառման կամ արարողության ես հրավիրում, որտեղ է տեղի ունենալու, որ ժամին և որքան է տևելու:

Բարեկիրթ շփման կարևոր բաղադրիչներից մեկն էլ բարեկիրթ ձևով ցավակցելը և մխիթարելն է:

- Ցավակցում եմ
- Դիմացիր
- Գլուխդ բարձր պահի՛ր:
- Ո՛չ առաջինն ես, ոչ վերջինը:

ԽՈՍՔԱՅԻՆ ԺԱՆՐԵՐ

Այս բաժնում անրադառնում են ոչ թե գեղարվեստական գրական, այլ իրական խոսքում օգտագործվող ժանրերին (խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն):

Այս բաժինը իր մեջ ներառում է հետևյալ կետերը.

- Տեքստ, նրա առանձնահատկությունները,
- Տեքստի տեսակները, պատմողական, նկարագրական , դատողական,
- Խոսքային ժանրեր (ուսումնագիտական առօրեական, գեղարվեստական խոսք տարրերով, լրագրական ժանրեր):

Տեքստը, ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է: Որպես կանոն այն ունենում է վերնագիր, որն արտացոլում է հիմնական միտքը:

Պատմողական

Տեքստի այս տեսակին երեխաներն արդեն ծանոթ ենք, թեև ամեն անգամ, երբ հանդիպում ենք դրան, կարելի է նորից հիշեցնել:

Այդպիսի տեքստերում պատմվում է դեպքերի , հերոսների արարքների մասին:

Պատմությունը տեքստի տեսակն է:

Այսպիսի տեսակին հանդիպում ենք հեքիաթներում, պատմվածքներում:

Նկարագրական

Այսպիսի տեքստերում նկարագրվում են մարդիկ, բնությունը, առարկանները: Այդպիսի տեքստերի տեսակին հանդիպում ենք կարդալով հեքիաթ, պատմվածք, հանելուկ, հայտարարություններ, գովազդ և այլն:

Դատողական

Այն տեքստերն են, որոնցում հիմնականում բացատրվում են դեպքերի, երևույթների պատճառները, ապացուցվում է ինչ-որ բան:

Այս համատեքստում կարելի է օգնել երեխաներին <<ընկերանալ>> ինչո՞ւ հարցի հետ:

- Ես ուշացա, որովհետև քնած էի մնացել:
- Ես բարկացա, որովհետև ինձ վիրավորել էին:
- Ես անտառ չեմ գնա, որովհետև հյուրերի եմ սպասում:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՐԻՆՈՒՄ

Սա առաջադրանք է երեխաների համար, ովքեր ուզում են պատմություն գրել սովորել:

Գրիր ինքդ քեզ համար նոթատետր

Յուրաքանչյուր երեխա կարող է օգտագործել օրագիր կամ նոթատետր: Կարելի է ցույց տալ նոթատետրը ինչ-որ մեկին՝ ուսուցչին, ընկերոջդ, մայրիկին կամ հայրիկին:

Ինչի մասին գրել

Նոթատետրում կարելի է գրել

- Այն մասին, թե ինչ է տեղի ունենում դպրոցում, Ի՞նչ եք սիրում ընկերների հետ անել:

Պատմություն հորինի՛ր և ձևավորի՛ր

Պատմություն գրելիս շատ կարևոր է, որ աշակերտը կարողանա պատմել այն մասին, թե ինչ է զգում

- Գոհ	- տխուր
- ուրախ	- վախեցած
- երջանիկ	- զայրացած
- զարմացած	- ափսոսանքով:

Հեքիաթի կամ պատմության պլան

Սկիզբ – 1. Ովքե՞ր են պատմության գործող հերոսները: Որտե՞ղ է տեղի ունենում պատմությունը:

Ընթացք – 2. Ո՞րն է խնդիրը

Ավարտ – 3. Ինչպե՞ս է խնդիրը լուծվում

Սեփական գրքի ձևավորում ու ստեղծում

Երեխաները արտագրում են իրենց հորինածը, նկարազարդում:

Կարող են և իրենք նկարեն և այլ նկարներից կտրտեն ու ապլիկացիա անել: Հետո խնամքով սոսնձում են իրենց գրքի էջերը, իսկական գրքի նման կազմում, շապիկը նկարում և ձևավորում:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ջ. Գյուլամիրյան ՝՝ Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում՝՝ Երևան 1988:

2.Խաչատրյան Ս ՝՝Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում ՝՝Նախաշավիղ հանդես՝՝՝՝ Երևան 2013:

3.Կանեցյան Գ. ՝՝Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում՝՝ :

4. Հայոց լեզու և գևականություն հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր: